ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի դեկտեմբերի 11-ից 16-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հայնան նահանգ գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Տիգրան Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ Շիրակի մարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   ՉԺՀ Հայնան նահանգ դեկտեմբերի 11-ից 16-ը

4. **Հրավիրող կողմը**

   «Արևադարձային գյուղատնտեսական մշակաբույսերի միջազգային ձմեռային տոնավաճառ Չինաստան-2019»-ի կազմկոմիտե:

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել «Արևադարձային գյուղատնտեսական մշակաբույսերի միջազգային ձմեռային տոնավաճառ Չինաստան-2019» խոշորագույն գյուղատնտեսական ցուցահանդեսին, որի շրջանակներում նախատեսված էր Հայնան նահանգի ղեկավար Շեն Սյաոմինի հետ համագործակցության հուշագրի ստորագրում, ինչպես նաև հանդիպումներ տեղի պետական և մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ:

6. Քննարկված թեմաները

Հուշագրի ստորագրումից հետո կողմերը քննարկել են հուշագրով նախատեսված բոլոր ոլորտներում հնարավոր համագործակցությանը վերաբերող հարցեր, Շիրակի մարզպետը ինչպես պետական տարբեր կառույցներում, այնպես էլ մասնավոր ընկերություններում ներկայացրել է մարզի զարգացմանն առնչվող առաջարկներ ու ծրագրային փաթեթներ: Քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Կողմերը քննարկել են Հայնան նահանգում Շիրակի մարզի և Շիրակի մարզում Հայնան նահանգի առևտրի տներ բացելու հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հայաստանի Հանրապետությունից պատվիրակությունը ներկայացրել են ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Մանասարյանը, Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը, «Չին-հայկական հարաբերությունների տարածաշրջանային ռազմավզրզկզն զարգացման հիմնադրամի» նախագահ Սերգեյ Ավանեսովը: ՉԺՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Մանասարյանը և Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը գլխավորել են պատվավոր հյուրերի ցանկը:

Շիրակի մարզպետը հանդիպել է տեղի մի շարք կառույցների ղեկավարների: «Արևադարձային գյուղատնտեսական մշակաբույսերի միջազգային ձմեռային տոնավաճառ Չինաստան-2019»-ի շրջանակներում Տիգրան Պետրոսյանը հանդիպել է Չինաստանի Կոմունիստական կուսակցության Հայնանի առաջին քարտուղար Լիու Ցիգուի հետ: Հայնան նահանգի ղեկավար Շեն Սյաոմինի հետ համագործակցության հուշագրի ստորագրումից հետո, մարզպետը քննարկում է ունեցել Հայնան նահանգի մարդկային ռեսուրսների և առևտրի դեպարտամենտների ղեկավարների հետ, այցելել է Չինաստանի մաքսային ծառայության Հայնան նահանգի ներկայացուցչություն, ծանոթացել աշխատանքներին: Հուշագրի դրույթները կյանքի կոչելու նպատակով Տիգրան

Պետրոսյանն աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ է ունեցել նաև մի շարք մասնավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ:
Շիրակի մարզպետն այցելել է «Հայսեն» ընկերություն, որտեղ խոսվել է բիզնես համագործակցությանն առնչվող հարցեր, ինչպես նաև «Հայնան էյրլայնս» ընկերություն, որտեղ քննարկվել են ավիաշուկայում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Հայաստանն առաջին անգամ է մասնակցել Չինաստանի խոշորագույն գյուղատնտեսական այսպիսի ցուցահանդեսի, մասնավորապես, Հայնան նահանգում անցկացվող ձմեռային միջազգային այս տոնավաճառին:
Տաղավարում ներկայացված է եղել Իջևանի գինու գործարանի բարձրորակ և էկոլոգիապես մաքուր արտադրանքը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

«Արևադարձային գյուղատնտեսական մշակաբույսերի միջազգային ձմեռային տոնավաճառ Չինաստան-2019»-ի շրջանակներում Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանի և Հայնան նահանգի ղեկավար Շեն Սյաոմինի միջև ստորագրվել է համագործակցության, փոխըմբռնման հուշագիր:
Այն գործնական քայլ է երկու երկրների շրջանների միջև սերտ հարաբերությունների հաստատման և ամրապնդման գործում՝ առևտրատնտեսական հարաբերությունների, գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության, զբոսաշրջության, բժշկության, հանքարդյունաբերության, քաղաքաշինության, էներգետիկայի, կրթության, գիտության, մշակույթի, ինչպես նաև խոշոր ներդրումային նախագծերի իրականացման առումով: Ըստ այդմ, կողմերը պարտավորվում են խթանել առևտրատնտեսական համագործակցությունը՝ ստեղծելով համապատասխան պայմաններ համատեղ բիզնեսի և ներդրումների համար, իրենց լիազորությունների շրջանակներում նպաստելու են գործարար շրջանակների միջև ուղղակի շփումների հաստատմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Շիրակի մարզի հնարավորությունների և ներուժի մասին առավել հստակ պատկերացում ունենալու, հուշագրով նախատեսված դրույթները կյանքի կոչելու նպատակով Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը Հայնանի պատվիրակությանը 2020 թվականի ամռանը հրավիրել է Շիրակի մարզ:

10. Գործուղվողը

ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյան

11. Ստորագրությունը

Recoverable Signature

X

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN TIGRAN 2103790332